1C

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Երևան

15 փետրվար 2018թ.

« «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Սամվել Գևորգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի վերաբերյալ.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի աշխատակից Անի Զաբաղյանի համար մատուցել «Թվային մարքեթինգի մասնագետի պատրաստում» խմբային դասընթաց: Դասընթացի ընդհանուր տևողություն է 22 ժամ, որը կիրականացվի սույն թվականի փետրվարի 15-ից մինչև մարտի 2-ը ընկած ժամանակահատվածում:

2. Կողմերի պարտականությունները և իրավունքները

2.1. Կատարողը պարտավորվում է.

2.1.1 Պատշաճ մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունը:

2.2. Պատվիրատուն պարտավորվում է.

2.2.1. վճարել Կատարողին մատուցված Ծառայության համար սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել Պատվիրատուից պատշաճ մատուցված Ծառայության դիմաց իրեն վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը:

3. Պայմանագրի գինը և վճարման պայմանները

3.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 65,000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկեր: Պատվիրատուն պարտավորվում է փոխանցել պայմանագրի գինը՝ պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 15/տասնհինգ/ աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն կատարողի տրամադրած փոխանցման հաշվի:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.2. Կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ազատվում են պատասխանատվությունից անհաղթահարելի ուժի /ֆորս մաժոր/ առաջացման պայմաններում:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր, ստորագրվում են Կողմերի կողմից և կազմում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:
5.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարման պահը:
5.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Պատվիրատու՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	Կատարող՝ «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ռիլնեցի 68 Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ Հ\Հ 163518012543 ՀՎՀՀ 02602449 Գործադիր տնօրեն՝ Ա.Աբրահամյան _____	ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1, 2հարկ ՀՎՀՀ 00930412 Ամերիաբանկ ՓԲԸ h/h 1570005343780200 Տնօրեն _____ Սամվել Գևորգյան